

ընտրությունները կատարվում են ու իրադրությունները անհրաժեշտ է լինում իրենց հարցերը հարցնելու և լուրջ կարծիքներ արտահայտելու և լուրջ կարծիքներ արտահայտելու և լուրջ կարծիքներ արտահայտելու...

■ ԳԻՍ պատգամաւոր մը եւս գոհ՝ ահաբեկչական գործողութեան

Անցնող շաբաթավերջին, Ասկերան – Սանապատ ճամբուն վրայ վայրենարար սպաննուած է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանի անդամ, Սանապատի կոլտնտեսութեան վարչութեան նախագահ 27-ամեայ Սուրեն Ծատրեան: Իր հետ միասին գոհուած են նաև Ասկերանի շրջանի փոխ հրամանատար 25-ամեայ Սանասար Ծատրեան և գումարտակի փոխ հրամանատար 23-ամեայ Անդրանիկ Պետրոսեան:

«ՈՒՍՁ – 469» մականիշի զինուորական ինքնաշարժը, որուն մէջ կը գտնուէին գոհերը, իրիկուան ժամը 10:15ին Ասկերանէն Սանապատ վերադառնալու ժամանակ ձեռնաուժներով և արագահարուածներով յարձակումի ենթարկուած է, որու հետեւանքով գոհուած են անոր մէջ գտնուող բոլոր մարդիկը: Ինքնաշարժը ամբողջութեամբ հրդեհուած է:

Երկու շաբթի նոյեմբեր 1ին ԼՂ ներքին գործոց նախարարութիւնը յայտարարած է, որ ահաբեկչական գործողութիւնը կատարած են «անձանօթ անձեր», և այս միջադէպի «հանգամանքները կը ճշդուին»: Ասկերանի շրջանի գաղտնաբերութիւնը իր հերթին սպանութեան դէպքի շուրջ քննութիւն բացած է:

Երկու շաբթի 1 նոյեմբերին, գոհերու յուղարկւողութեան ներկայ եղած են Արցախի օրէնսդիր և գործադիր լեւանութիւններու, ինչպէս նաև իրաւապահ մարմիններու ղեկավարները:

12 օրու ան ընթացքին ԼՂ Գերագոյն Խորհուրդի երկրորդ պատգամաւորն է որ գոհ կը դառնայ ահաբեկչութեան: Առայժմ չեն բացայայտուած ԳԻՍ պատգամաւոր և Մարտակերտի շրջանի հրամանատար Նորայր Դանիէլեանի սպանութեան հանգամանքները: ԼՂ իրաւապահ մարմիններու ներկայացուցիչները ընդգծած են միայն, որ երկու գործութիւններն ալ կատարուած են «նմանախալ» ձևով: «Այս երկու սպանութիւնները ցոյց կու տան, որ մեր հասարակութիւնը ծանր հիւանդ է և այդ հիւանդութիւնը անկարելի է բուժել միայն պատժիչ միջոցներով», յայտարարած է Արցախի զինուորական գաղտնաբերութեան բարձրաստիճանի պաշտօնատարներէն մէկը, որ չէ ուզած իր անունը հրատարակել:

■ ԼՂՂ ղեկավարութիւնը պատրաստ է բանակցելու

Վերջին օրերուն Ատրպէյճանի դանդուածային լրատուութեան միջոցները սուտ տեղեկատուութիւն կը տարածեն Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան զինեալ ուժերու Ատրպէյճանի Պէյլականի շրջանի ներխուժելու մասին:

ԼՂՂ մամուլը և լրատուութեան նախարարութիւնը յայտարարած է, որ Լեւոնային Ղարաբաղի բանակը կը գտնուի մինչև հոկտեմբեր 27 իր ունեցած զէնքերուն մէջ և խստօրէն կը պահպանէ ԼՂՂ զինեալ ուժերու կողմէ միակողմանիօրէն յայտարարուած զինադադարը ռազմաճակատի այս հաստատմին վրայ:

Տարածելով հերթական յուտ լրատուութիւնը այսպէս կոչուած բռնադրաման մասին, Ատրպէյճանական կողմը կը ջանայ մոլորութեան մէջ ձգել համաշխարհային հանրութիւնը և համարել միջազգային կազմակերպութիւններու կողմէ ԼՂՂ նկատմամբ պատժամիջոցներու կիրարկման:

ԼՂՂ ղեկավարութիւնը առաջուան նման պատրաստ է բանակցութիւններ ունենալու Ատրպէյճանի ղեկավարներուն հետ, կրակի դադարեցման և շրջանին մէջ կայուն խաղաղութեան հաստատման հարցերու շուրջ:

■ Գերագոյն Խորհուրդի նստաշրջանը վերսկսաւ իր աշխատանքներուն

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի նստաշրջանը շարունակեց իր ընդհատուած աշխատանքները: Պատգամաւորները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեցին դաւադիր զննակի գոհ գացած պատգամաւորներ Նորայր Դանիէլեանի և Սուրէն Ծատրեանի յիշատակը:

Գերագոյն Խորհուրդի բարոյականութեան, մարդկային իրաւունքներու և ազգութիւններու յանձնախումբի նախագահ պատգամաւոր Հրանդ Սաչատրեանի ներկայացուց «ԼՂՂ ժողովրդական պատգամաւորներու գործունէութեան ապահովման կարգի մասին» օրէնքի նախագիծը: Սոյն նախագիծը, որ նախօրօք բաժնուած էր պատգամաւորներուն, մանրամասն քննարկումէ ևտք ընդունուեցաւ նստաշրջանին կողմէ: Այսպիսով ԼՂՂ Գերագոյն Խորհուրդը ընդունեց օրէնք մը ևս, որ պիտի կիրարկուի 1994 թուականի յունուար 1էն սկսեալ:

Այնուհետև քննարկման դրուեցաւ «ԼՂՂ ժողովրդական պատգամաւորներու ընտրութիւններու կեղծումական ընտրական յանձնախումբի կարգավիճակի մասին» օրէնքի նախագիծը: Մեկնելով ԼՂՂ ժողովրդական պատգամաւորներու

Օրու ան առաջին նիստի երկրորդ հարցը «ԼՂՂ գաղտնաբերութեան մասին» օրէնքի նախագիծի քննարկումն էր, որը ներկայացուց ԼՂՂ ԳԻՍ իրաւական հարցերու բաժանմունքի վարիչ Եուրի Հայրապետեան:

Նախագիծի քննարկումը շարունակուեցաւ ընդմիջումէն ևտք: Օրու ան երկրորդ կէսին Գերագոյն Խորհուրդի նստաշրջանը շարունակեց իր աշխատանքները: Պատգամաւորները շարունակեցին քննարկել «ԼՂՂ գաղտնաբերութեան մասին» օրէնքի նախագիծը, որ ընդունուեցաւ առաջին ընթացումով: Նախագահութեան առաջարկուեցաւ խմբագրական փոփոխութիւններ կատարել ևտք վայն ներկայացուցիչ նստաշրջանի վերջնական հաստատման:

Օրակարգի այլ հարցերու կարգին պատգամաւոր Մ. Պետրոսեան առաջարկեց քննարկել ընդլայնուած նախագահութիւն ստեղծելու հարցը: Բուտն բանախօսեց ևս առաջարկներէ վերջ որոշուեցաւ հարցի քննարկումը շարունակել յաջորդ օրը:

■ Ռմբակոծում՝ «գրաւեալ» շրջանէն

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան լրատուական գրասենեակէն կը յայտնեն, որ ԼՂՂ բանակի հրամանատարութիւնը վերստին կը հերքէ ատրպէյճանական քարոզչութեան այն սուտ լուրերը, որ իրրեւ թէ դարբարդեան բանակը գրաւած է ատրպէյճանական Պէյլականի (նախկին Ժրտանովի) շրջանը:

Հետաքրքրական զինուորական մարտավարութեան կը ձեռնարկեն ատրպէյճանական բանակի հրամանատարութիւնը և լրատուական միջոցները, ինչ որ արդէն պարզ է դարբարդեան բանակին: Ստացող այդ լուրերուն միշտ կը յաջորդէ ատրպէյճանական բանակի լայնածաւալ յարձակումը ռազմաճակատի այդ տիրութեամբ:

Այդ շրջանէն պարբերաբար ռմբակոծուած են արցախեան բանակի զիբքերը, ռազմաճակատի հարաւ – արեւելեան հատուածին մէջ: Բարերախտաբար տուժածներ չկան:

■ Անկեղծ խոստովանութիւն՝ Պանում Լալա Շեքվէթ Հաճիւեայի կողմէ

Ատրպէյճանի հեռուտեսիլը ցուցադրեց պետական քարտուղար Լալա Հաճիւեայի մէկ հանդիպումը սպերի գաղթականներու հետ:

Վերլուծելով ատրպէյճանական բանակի խայտառակ պարտութիւնները, խիստ վրդոված և անհանգստացած պետական քարտուղարը լուտանքներ թափեց սպերի դասալիքներու հասցէին, սրտի կակիծով նշեց՝ որ որքան ալ իրենք մեծաթիւ են, ատուի հանդերձ իրենց բանակը թոյլ է համեմատաբար դարպաղցիներու: Բարկացած և կրակ դարձած խանումը, որ կը խօսէր մէկ ատրպէյճաններէն, մէկ ուսերէն, ներկաներուն յայտնեց, թէ ինչպէս Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Պաշտպանութեան Պետական Կոմիտէի նախագահ Ռոպերթ Քոչարեանը հեռաձայնած է «ամենակարող» Հայտար Ալիւսին ևս բաւած:

– Հայտար Ալիւսին, շնորհակալութիւն մեզի ձգած ձեր ծանր հրասայեբուն, մի քանի քնդանօքներուն և այնքան ռազմամթերքին համար, որոնցմով կրնանք մէկ տարի կռուիլ ձեզի դէմ:

Չայրացած խանումը իր խօսքին մէջ հերքեց ատրպէյճանական մամուլի տարածած այն սուտ լուրը, որ իբր թէ դարբարդեան բանակի շարքերուն մէջ կան սեւամորթներ, արարներ, ամերիկացի և անգլիացի զինուորներ: Ան նշեց, որ ատիկա սուտ է, և այնտեղ միայն հայերն են որ կը կռուին:

Պանում Հաճիւեան ուզելով շեշտել իրենց բանակի և գաղթականներու վստիկութեան աստիճանը, խօսեցաւ վրասերով:

– Մենք 100 օր գէնքի գանազան տեսակներէ ռմբակոծեցինք Ստեփանակերտը, բայց ստեփանակերտցիները, նոյնիսկ կիները և մանուկները ապրեցան նկուղներու մէջ, չլքեցին իրենց հայրենի հողը: Իսկ մեր ժողովուրդը առաջին իսկ կրակոցէն կը փախչի:

Անշուշտ խանում Հաճիւեան յուսադրիչ խօսքեր սլուաւ, թէ՛ դարբարդցիներու կողմէ գրաւուած շրջանները պիտի վերադարձուին Ատրպէյճանին:

– Ո՞վ կը ձգէ որ անոնց մնան Զանգեղանի ու ձեպրայիլը, Հորատիզը, Դուպարիլին, Ֆիզուլին, Շուշին ու Լաչինը:

Ղարաբաղցիներու անունով չկրցանք շնորհակալութիւն յայտնել խանում Հաճիւեային, որ վերջապէս գտնուեցաւ մէկը, որ նշեց՝ թէ Ղարաբաղի մէջ կը կռուին միայն հայեր, թէ մայրաքաղաքի անունը Ստեփանակերտ է և ոչ Պանքեան, և ամենակարեւորը՝ հողը դարբարդցիներ համար հայրենի է և ան չի լքեր իր հայրենի հողը: